



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՄԱՅՐԵՐՈՒ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ **ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, Մայիսին 13-ին, Մայրերու տօնին առիթով թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Յոլիւուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Ս. Պատարագին, եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ հաւատացեալներուն:

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները, որպէսզի ներկայ ըլլան Ս. Պատարագի արարողութեան եւ հաղորդուին օրուան պատգամով:

PRELATE TO PRESIDE OVER HOLY MASS AT ST. GARABED CHURCH

On Sunday, May 13, Mother's Day, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Holy Mass at St. Garabed Church in Hollywood and deliver the sermon.

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Լաս Վեկասի մեր ծխական համայնքին, Կիրակի, Մայիսի 13-ի կ.ե. ժամը 3-ին, ամսական Ս. Պատարագ պիտի մատուցուի Լաս Վեկասի Lakes Lutheran եկեղեցւոյ մէջ:

Առաջնորդ Սրբազան Զօր տնօրինումով, Արժ. Տ. Խորեն Ա. Քհնյ. Հապէշեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ նշեալ եկեղեցւոյ մէջ:

HOLY MASS AT THE LAS VEGAS PARISH

On Sunday, May 13, Holy Mass will be offered at the Las Vegas parish at 3:00 p.m. at the Lakes Lutheran Church. Let us note that Holy Mass is offered on a monthly basis at our parish in Las Vegas. By the ordinance of the Prelate, Archpriest Rev. Khoren Habeshian will conduct Mass and deliver the sermon.

ԲԱՅՈՒՄ՝ ՖԵՐԱՅԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՄԱՎԱՐԳԻՉԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ

Ուրբաթ, Մայիս 11-ին, կ.ե. ժամը 3-ին, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, պաշտօնական բացումը կատարուեցաւ Ֆերահեան Ազգ. վարժարանի Նորթ Հիլզի համալիրի համակարգիչներու նոր բաժանմունքին, որ բարերարներուն անունով՝ Խաչիկ եւ Էլօ Մուրատեան համակարգչային կէդրոն անուանակոչուեցաւ:

Գործադրուեցաւ կոկիկ յայտագիր մը որուն ընթացքին Առաջնորդ Սրբազանը գնահատանքի եւ օրհնութեան խօսք ուղղեց վարժարանին եւ բարերարներուն ապա կատարեց բացման արարողութիւնը:



OPENING CEREMONY OF THE MOURADIAN COMPUTER LAB

On the afternoon of Friday, May 11, the official opening of the Kachik and Elo Mouradian computer lab at the North Hills campus of Holy Martyrs Ferrahian School took place under the auspices of the Prelate. The Prelate attended the ceremony and conveyed his best wishes.

ԱՐՄԷՆ ԱՏԻԼԽԱՆԵԱՆԻ ՆԿԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆՂԷՍ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի կազմակերպութեամբ, նկարչական ցուցահանդէս մը տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, ուր պիտի ներկայացուի արուեստագետ Արմէն Ատիլխանեանի նկարչական գործերը:

Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնը վայելող ցուցահանդէսին բացումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Մայիս 11-ին, երեկոյեան ժամը 7-ին. ցուցահանդէսը կը շարունակուի Շաբաթ եւ Կիրակի, կ.ե. ժամը 1-էն մինչեւ 6:

ART EXHIBITION BY ARMEN ADILKHANYAN AT THE PRELACY

From Friday, May 11th to Sunday, May 13th, an art exhibition by Armen Adilkhanyan will take place at the Prelacy “Dikran and Zarouhi Der Ghazarian” Hall. The exhibit is being held under the auspices of the Prelate and is organized by the Ladies Auxiliary Guild.

The exhibit opens on Friday, May 11, at 7:00 p.m., and will continue on Saturday and Sunday from 1:00 to 6:00 p.m.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆ ՀՕՐ ՀՈՎԱՆԱԴՐՈՒԹԵԱՄ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ՆՈՒԻՐՈՒԾ ՁԵՌՆԱՐԿ

Այս շաբաթավերջին Թեմիս եկեղեցիներու հոգաբարձութեանց եւ տիկնանց միութիւններու կազմակերպութեամբ, տեղի կ'ունենան Մայրերու օրուան նուիրուած ձեռնարկներ, որոնք կը վայելեն Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը:

Շաբաթ, 12 Մայիսի երեկոյեան, Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Տիկնանց միութեան կազմակերպած Մայրերու օրուան նուիրուած ճաշկերոյթին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը: Ձեռնարկը տեղի պիտի ունենայ «Աւետիսեան» սրահին մէջ:

MOTHER'S DAY CELEBRATION AT HOLY MARTYRS CHURCH UNDER THE AUSPICES OF THE PRELATE

On the occasion of Mother's Day our parishes' Boards of Trustees and Ladies Associations have organized various celebrations which will take place under the auspices of the Prelate.

On the evening of Saturday, May 12, the Prelate will attend the Mother's Day celebration organized by the Holy Martyrs Church Board of Trustees and Ladies Association at "Avedissian" Hall and will convey his blessings.

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Հինգշաբթի, Մայիս 17-ին, Համբարձման տօնին առիթով, առաւօտեան ժամը 10-ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի Կլենտոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Ս. Պատարագին պիտի հանդիսապետէ Առաջնորդ Սրբազան Հայրը:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Նոյն օրը, Ս. Պատարագի աւարտին, ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Կլենտոյի «Ֆենիսիա» ճաշարանին մէջ:

Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը վայելող այս ձեռնարկը կազմակերպուած է Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ:

Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել Ազգային Առաջնորդարան:

HOLY MASS AND LUNCHEON ON THE FEAST OF THE ASCENSION OF OUR LORD JESUS CHRIST

On Thursday, May 17, the Prelate will preside over Holy Mass at St. Mary's Church in Glendale on the feast of the Ascension of our Lord Jesus Christ. Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian will conduct Mass and deliver the sermon.

Following Mass, a luncheon has been organized by the Prelacy Ladies Auxiliary Guild which will take place under the auspices of the Prelate at "Phoenicia" Restaurant in Glendale.

ԹԵՄԻՍ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 35-ՐԴ ՆՍՏԱԶՐՋԱՆ

Արեւմտեան մեր Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովը ամէն տարի կը գումարուի Մայիս ամսուան երրորդ շաբաթավերջին:

Համաձայն այս ականդութեան, Ազգ. Երեսփոխանական Ժողովի 35-րդ նստաշրջանը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Մայիս 18-ին եւ Շաբաթ, Մայիս 19-ին, Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի համալիրին մէջ, հիւրընկալութեամբ Օրէնճ Բաունթիի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ:

Օրակարգի վրայ եւ մեր եկեղեցիներու, վարժարաններու եւ առհասարակ ազգային կեանքի տարբեր կալուածներուն մէջ տեղի ունեցող աշխատանքներուն ընթացքն ու արդիւնքը:

Ազգային Երեսփոխանական Ժողովի նախօրեակին, եւ նոյն աշխատանքներու ծիրին մէջ, յաջորդաբար Չորեքշաբթի, 16 Մայիսին եւ Հինգշաբթի, 17 Մայիսին, Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքին «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, տեղի պիտի ունենան Թեմիս հոգեւորականաց, Հոգաբարձութեանց ու Տիկնանց Միութիւններու համագումարները, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր: Համագումարը առիթ պիտի ըլլայ միասնաբար քննարկելու մեր Թեմը յուզող հասարակաց հարցերն ու ճշդելու անոնց լուծման միջոցները եւ այդ նպատակով պատրաստելու գործակցութեան դաշտերը:

Հոգաբարձութեանց ու Տիկնանց Միութիւններու ներկայացուցիչները հակիրճ գեկոյցներ պիտի տան իրենց կատարած եկեղեցանուէր աշխատանքին մասին, ապա նաեւ խորհրդակցութիւն պիտի ունենան այդ աշխատանքէն քաղուած փոխադարձ փորձառութեանց ու յառաջիկայի աշխատանքներու մասին:

Չորեքշաբթի, Մայիս 16-ին, պիտի գումարուի Հոգեւորականաց համագումարը, որ պիտի ընդգրկէ առաւօտեան ժամերգութիւն, հոգեւոր խորհրդածութիւն եւ դասախօսութիւն: Ժողովը օրակարգի վրայ պիտի ունենայ ծխական շրջաններու կարիքներու եւ ընդհանրապէս մեր Թեմի այժմեական հարցերը, որոնց լուծման համար պիտի առնուին համապատասխան որոշումներ: Համագումարը նաեւ պիտի բանաձեւէ առաջարկներ եւ ծրագիրներ, որոնք պիտի ներկայացուին Ազգային Երեսփոխանական Ժողովի 35-րդ նստաշրջանին:

ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ

Իսկ Շաբաթ, Մայիս 19-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ս. Նահատակաց եկեղեցւոյ «Աւետիսեան» սրահին մէջ, տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի տարեկան ձեռնարկը, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ

կազմակերպութեամբ Ազգային Վարչութեան: Տեղեկութեանց համար հեռաձայնել
Ազգ. Առաջնորդարան:

PRELACY 35TH NATIONAL REPRESENTATIVES ASSEMBLY

Each year, the Prelacy Representatives Assembly convenes on the third weekend of May. The 35th National Representatives Assembly will take place on Friday, May 18, and Saturday, May 19, at the Prelacy “Dikran and Zarouhi Der Ghazarian” Hall, hosted by Forty Martyrs Church of Orange County.

On Wednesday, May 17, a clergy conference will take place at the Prelacy hall consisting of morning service, lecture presentations, and discussions on parish activities. On Thursday, May 17, the Boards of Trustees and Ladies Associations of our parishes will hold their annual meeting where they will report on their past year’s activities and discuss issues of concern to their respective parishes.

On the evening of Saturday, May 19, following the close of the Assembly, the first annual banquet of the Executive Council will take place at “Avedissian” Hall in Encino at 7:30 p.m. The banquet will take place under the auspices of the Prelate and is organized by the Executive Council.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](#) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.